ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ,ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
N ՀՀԱՆ-ԲԸԱՀԾՁԲ -14/008

ք. Երևան «02» 07 2014 թ.

ՀՀ արդարադատության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Կ.Ադամյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Գրիգորյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)

1.2 Ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջի(բանավոր կամ գրավոր) (նախատեսված ծավալներով, ժամկետներում և տեխնիկական բնութագրի):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, որի արդյունքը հնարավոր չէ շտկել

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը չորս և ավելի անգամ:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 8750000 (ութ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ, քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 %-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են

պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3.1 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի. Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի:

Սույն պայմանագրում չեն կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայությունների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2 և 3 հավելվածները՝ բաղկացած 4 էջից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարություն
ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011194157
ՀՎՀՀ 02506264

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ
ք. Երևան, Անտառային փ. S. 120/5
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16076012101400
ՀՎՀՀ 00125777
էլ. հասցեն՝ retro.feelings@mail.ru

Հավելված N 1
«02» « 07 » 2014 թ. կնքված
N ՀՀԱՆ-ԲԸԱՀԾՁԲ-14/008 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների

Հ/Հ	Աշխատանքների տեսակ	Ծառայության անվանումը	Միավորի գին
1	Օպերացիոն ծրագրերի տեղադրում	Համակարգիչների օպերացիոն համակարգի ծրագրերի ձեռքբերում տեղադրում, ((pc) օպերացիոն համակարգերի ծրագրային փաթեթներ/ Microsoft Windows 7 32-bit/64-bit/կամ համարժեք ծրագրի ձեռքբերման ծառայություններ)	79900
2	Օպերացիոն ծրագրերի սպասարկում	Համակարգիչների օպերացիոն համակարգի ծրագրերի թարմացում	29900
3	Համակարգիչների հակավիրուսային համակարգերի տեղադրում	Համակարգիչների ծրագրային անվտանգության ապահովում, Հակավիրուսային ծրարգրերի (Esset Nod smart security կամ համարժեք) ձեռքբերում և տեղադրում:	30000
4	Համակարգչային խափանումների ախտորոշում	Համակարգիչային խափանումների ախտորոշում, այլ անհրաժեշտ գործողությունների կատարում	15000
5	Համակարգչային խնդիրների վերացում	ախտորոշված խնդիրների վերացում, ծրագրային մոդուլների վերատեղադրում	21000
6	Տպիչների լիցքավորում	Konica, Minolta, , HP, Canon, Lexmark տպիչների քարթրիջի լիցքավորում	4800

7	Տպիչների սպասարկում	Konica, Minolta,HP,Canon,Lexmark սպասարկում, նորոգում	21500
8	Պատճենահանման սարքավորումների լիցքավորում	Xerox,Konica,HP,IR պատճենահանող սարքերի քարթրիջների լիցքավորում	39000
9	Պատճենահանման սարքավորումների սպասարկում	Xerox,Konica,HP,IR պատճենահանող սարքերի սպասարկում, նորոգում	58000

- Ծառայությունները պետք է մատուցվեն ըստ Պատվիրատուի պահանջի և տեղում
- Կատարողը պետք է Պատվիրատուի պահանջի դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայանա Պատվիրատուին՝ համապատասխան ցուցումներ ստանալու համար:
- Կատարողը պետք է ծառայությունները մատուցի Պատվիրատուից ստացած ցուցումների օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- Տեղափոխման ենթակա ապրանքները պետք է տեղափոխվեն Կատարողի ուժերով և միջոցներով:
- Լիցքավորված քարթրիջները պետք է տպեն առնվազն 2000 էջ/A4/:
- Մասնակիցը պարտավորվում է մատուցել վերը նշված ծառայությունները 2014թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում /մինչև 25.12.2014թ. ներառյալ/՝ ներկայացված ցանկացած պահանջի և քանակի դեպքում:

- Նորոգումները իրականացվում են պատվիրատուի կողմից տրամադրված պահեստամասերով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարություն
ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011194157
ՀՎՀՀ 02506264

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ
ք. Երևան, Անտառային Փ. S. 120/5
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16076012101400
ՀՎՀՀ 00125777
էլ. հասցե: retro.feelings@mail.ru

Հավելված N 2
«02» «07» 2014 թ. կնքված
N ՀՀԱՆ-ԲԸԱՀԾՁԲ-14/008 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**
ՀՀ արդարադատության նախարարություն

Հ/Հ	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2014թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում՝			
		1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1-9	Համակարգչային սարքրեի և սարքավորումների սպասարկման և կառավարման ծառայություններ.	-	-	8 000 000	8 750 000

Աճողական

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարություն
ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011194157
ՀՎՀՀ 02506264

(ստորագրություն)
H.S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ
ք. Երևան, Անտառային Փ. S. 120/5
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16076012101400
ՀՎՀՀ 00125777
էլ. հասցեն՝ retro.feelings@mail.ru

«ՌԵՏՐՈ ՖԻԼԻՆԳՍ»
(ստորագրություն)
00125777

Հավելված N 3
« » « » 2014 թ. կնքված
N ՀՀԱՆ-ԲԸԱՀԾՁԲ-14/008 պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝
_____
_____
____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և Կատարողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայությունները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Ծառայությունների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ ծառայությունների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.